



## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«12» հունվար 2024թ.

ՀՐԱՄԱՆ N 7. Շ

«ԱԶԻՄՈՒՏ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ  
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N 329-Ա հրամանը, «Ազիմուտ» ավիաընկերություն» բաժնետիրական ընկերության 2023 թվականի մարտի 6-ի և 2023 թվականի սեպտեմբերի 29-ի գրությունները, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2024 թվականի հունվարի 11-ի թիվ ՀՎ/29.2/674-2024 գրությամբ ներկայացված ՀՀ էկոնոմիկայի նախարարության դրական եզրակացությունը.

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Ազիմուտ» ավիաընկերություն» բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) Ուֆա-Երևան-Ուֆա երթուղու համար «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով նախատեսված և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N 329-Ա հրամանով տրամադրված արտոնությունը երկարաձգել 24 ամսով:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված արտոնությունը տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2023 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 538-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Երևան/UDYZ/-Ուֆա/UWUU/ երթուղով իրականացվող չվերթների վրա՝ 2024 թվականի հունվարի 13-ից մինչև 2024 թվականի մարտի 30-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմանների, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին:

3. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

5. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի հանձնումն Ընկերությանը:

1/12/2024

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ